



Այսուհետև մարտի է գնալու հայրենական արոՖեսիոնալ էկոլրագրությունը

«Էկո-Մեդիա» ցանցը, Բնության համաշխարհային հիմնադրամի և ՄԱԿ-ի երևանյան գրասենյակի աջակցությամբ, կազմակերպել են էկոլրագրության առաջին դասընթացը: Էկոդասընթացի մասնակիցներին ողջունեց ՀՀ բնապահպանության նախարարի խորհրդական Արծրուն Պեպանյանը: Նա անդրադարձավ էկոլրագրության զարգացման անհրաժեշտությանը և նախարարության անունից պատրաստակամություն հայտնեց աջակցել լրագրողներին՝ շրջակա միջավայրի խնդիրների լուսաբանման հարցում: WWF-Հայաստան գրասենյակի համագործակցության և հասարակության հետ կապերի բաժնի ղեկավար Հերմինե Հակոբյանն իր հերթին ներկայացրեց Վայրի բնության պահպանման համաշխարհային հիմնադրամի անելիքները: ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի հանրային տեղեկատվության վարչություն ղեկավար Արմինե Հալաջյանը նույնպես անդրադարձավ «Էկո-Մեդիա» ցանցի գաղափարին և նշեց, որ գրասենյակը միշտ պատրաստակամ է ընդունել խմբի հավաքները իր հարկի տակ: «Բնապահպանական լրագրությունը կարևոր է, և մեր հասարակությունը կարիք ունի գրագետ նյութերի», - ասաց նա: Ցանցի համակարգող Գալուստ Նանյանը, մինչ դասընթացը սկսելը, հայտարարեց, որ ցանցը այսուհետ կհամակարգի էկոլրագրող Նարինե Կի-



րակոյսյանը, նրան կփոխանցվի դեռևս 2015 թ.-ին ստորագրված ՅուՆազգիրը, որը համարվում է էկոլրագրողների աշխատանքային ուղեցույցը: «Այսօր այն լրագրողները, ովքեր փորձում են պատրաստել բնապահպանական թեմայով նյութեր, խորապես չեն ուսումնասիրում ոլորտը և առկա խնդիրները: Լինում են շատ դեպքեր, որ այդ թեմայով նյութերը պատրաստվում են թերի: Գրեթե բոլոր նյութերը հարցազրույցների արձանագրություններ են, իսկ շատ դեպքերում այդ արձանագրությունները հեղինակները չեն էլ փորձում մեկանաբանել:»

• Այսուհետև մարտի է գնալու հայրենական որոֆեսիոնալ էկոլոգությունը

Սկիզբը էջ 11

Թեև հայրենական էկոլոգիական լրագրությունը նոր է ծնունդ առել, սակայն արդեն հանդիպում է բազմաթիվ խոչընդոտների և խնդիրների, որոնց թվում են պարբերականների անկախ չլինելը, կոնֆլիկտային բնույթի տեղեկատվության առկայությունը, ինչպես նաև լրագրողների գիտական ցածր պատրաստվածությունը՝ էկոլոգիական հարցերի առումով, իսկ ամենագլխավորը՝ էկոլոգիական հարցերի լուսաբանման կոնկրետ խմբագրական քաղաքականություն չկա»,- ասաց Գալուստ Նանյանը, ապա վարեց առաջին էկոլոգաբանությունը, որը վերաբերում էր բնապահպանական լրագրության խնդիրների լուսաբանմանը: Դասընթացի վերջում նա նշեց, որ հաջորդը չի ուշանա և նվիրված կլինի հետևյալ թեմաներին՝ «էկոլոգիական լրագրության

հիմնական սահմանումները», «էկոլոգիական լրագրության խնդիրներն ու գործառնությունները և էկոլոգիական տեղեկատվության փոխանցման ձևերը», «էկոլոգիա, տնտեսություն և քաղաքականություն հիմնախնդրի միասնականության հանգույց», «էկոլոգիական հիմնախնդիրների բարձրացումը խորհրդահայ մամուլում 1955 թվականից մինչև 1990 թվականը»:

Դասընթացի մասնակիցները վերջում ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի և WWF-Հայաստան գրասենյակի կողմից ստացան օգտակար նյութեր, ինչպես նաև վերջերս տպագրված «Կանաչ Հայաստան» գիրքը, նաև պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ հաջորդ ամիս կկազմակերպվի «Ընձառյուծի հետքերով» մեդիաարշավը:

Բնապահպանության նախարարի պարտականությունները ժամանակավորապես կկատարի նախարարի առաջին տեղակալ Սիմոն Պապյանը



«Վարչապետ Կարեն Կարապետյանի որոշմամբ՝ ս.թ. մարտի 13-31-ը ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանին տրամադրվել է չվճարվող արձակուրդը:

Արծվիկ Մինասյանի՝ արձակուրդում գտնվելու ընթացքում ՀՀ բնապահպանության նախարարի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դրվել է նախարարի առաջին տեղակալ Սիմոն Պապյանի վրա:

Նշենք, որ Արծվիկ Մինասյանն այդ ընթացքում զբաղված է լինելու նախընտրական քարոզարշավով: Նա զբաղեցնում է ՀՀԳ համամասնական ցուցակի 6-րդ հորիզոնականը:

Գեսպան Եժի Մարեկ Նովակովսկին Հայաստանի Բնապահպանության նախարարին հրավիրում է Լեհաստան

«Բնապահպանության նախարարի առաջին տեղակալ Սիմոն Պապյանը հանդիպել է ՀՀ-ում Լեհաստանի արտակարգ և լիազոր դեսպան Եժի Մարեկ Նովակովսկուն՝ վերջինիս նախաձեռնությամբ: Հանդիպման նպատակը Լեհաստանի բնապահպանության նախարարի՝ ՀՀ բնապահպանության նախարարին ապրիլի 27-29 Լեհաստանի Պիլա քաղաքում կայանալիք Արևելյան գործընկերության երկրների բնապահպանության նախարարների հանդիպման մասնակցության հրավերը փոխանցելն էր: Գեսպան Նովակովսկին կարևորել է «Փարիզյան համաձայնագիրը որպես աշխարհի կայուն զարգացման հնարավորություն» խորագրով վերոհիշյալ հանդիպումը, որը հնարավորություն կտա քննարկելու շրջակա միջավայրին, կլիմայի փոփոխությանն ու բնապահպանական խնդիրներին առնչվող բազմաթիվ հարցեր: Փոխնախարար Սիմոն Պապյանը շնորհակալություն է հայտնել հրավերի



համար և ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանի անունից հավաստել, որ նման կարևոր հանդիպմանը ՀՀ բնապահպանության նախարարը նաև ելույթով հանդես կգա՝ ներկայացնելով Հայաստանի մոտեցումները Փարիզյան համաձայնագրի շրջանակներում իրականացվող գործընթացում: Կողմերը քննարկել են Հայաստանի և Լեհաստանի միջև բնապահպանության ոլորտում համագործակցության ընդլայնման հնարավորությունները նաև տնտեսական փոխգործակցության տեսանկյունից՝ հանդիպման ավարտին ևս մեկ անգամ հավաստելով փոխշահավետ համագործակցության ընդլայնման պատրաստակամությունը:

«ՀԱԲ» ծրագիրն ապահովելու է հատուկ պահպանվող տարածքների կառավարման արդի համակարգ



Մարտի 10-ին ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը հանդիպել է «Թեքնոլոջի ընդ սայնս դայնամիքս» ընկերության հիմնադիր-տնօրեն Վահան Շաքարյանի հետ: Հանդիպմանը մասնակցել են նաև CNF-ի Հայաստանի ազգային համակարգող Արման Վերմիշյանը, նախարարի խորհրդական Արեգ Ղարաբեգյանը, ինչպես նաև՝ նախարարության համապատասխան ստորաբաժանումների ներկայացուցիչներ: Վ.Շաքարյանը ներկայացրել է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի նորարարական «ՀԱԲ» ծրագիրը, որի նպատակն է ապահովել Հատուկ պահպանվող տարածքների կառա-

վարման համակարգը: Ներկայացված գաղափարի արդյունավետ կիրառումը ենթադրում է բնապահպանական բազմաթիվ խնդիրների կարգավորում: «Այս ծրագիրը ստեղծում է ընդհանուր համակարգի կառավարում, հսկում, վերլուծություն, հատկապես բնության հատուկ պահպանվող տարածքների և արգելոցների հսկողությունը մեքենայացնելու (ավտոմատացնելու) նպատակով», - նշել է ընկերության տնօրենը: «ՀԱԲ» համակարգով կարելի է որոշել նաև անտառների ծանրաբեռնվածությունը, արդյունավետ պայքար մղել ապօրինի ծառահատումների և որսագողերի դեմ Հանդիպմանն անդրադարձ է եղել ծրագրի իրականացման գործընթացին: Կարևորվել է բնության հատուկ պահպանվող տարածքներում նորարարական տեխնոլոգիաների կիրառմամբ բնապահպանական ոլորտում արդյունավետ կառավարման իրականացումը: Հանդիպման ավարտին առաջարկվել է առաջիկայում նոր քննարկում կազմակերպել ՀՀ բնապահպանության նախարարության, «Տեղեկատվական վերլուծական կենտրոն» ՊՈԱԿ-ի աշխատակիցների և «Թեքնոլոջի ընդ սայնս դայնամիքս» ընկերության մասնագետների մասնակցությամբ՝ ծրագրի ներդրման ռեսուրսային հաշվարկ իրականացնելու համար:

Հերթական նվիրատվությունը նախարարությանը

Մարտի 16-ին Բնապահպանության նախարարությունում հերթական նվիրատվությունն է կատարվել Ամերիկահայ ճարտարագետների և գիտնականների ընկերակցության կողմից: ՀՀ բնապահպանության նախարարության մի շարք վարչություններ ստացել են Հայկական արտադրության ARMTAB համակարգիչներ, որոնք թե նախարարության գործակարգավարական խորհրդակցություններին, թե արտագնա հանդիպումներում առավել ոյուրին կդարձնեն աշխատանքը: Հիշեցնենք, որ մինչ այս Ամերիկահայ ճարտարագետների և գիտնականների ընկերակցությունը համակարգիչներ և շինարարական վերանորոգումներ էր իրականացրել Բնապահպանության նախարարությունում: Ընկերակցությունն իր պատրաստակամությունն է հայտնել հետագայում նույնպես նախաձեռնել նմանատիպ նվիրատվություններ՝ նախարարության աշխատանքային պայմանների բարելավման և նախարարի բարեփոխումների ծրագրին աջակցելու նպատակով:



Գարնանային մոնիթորինգ հատուկ պահպանվող տարածքներում

Շարունակվում է նախարարության «Սևան» ազգային պարկի կողմից Սևանա լճի մակերևույթի սառցակալման հետևանքով սահմանված խիստ հսկողության ռեժիմը: «Սևան» ազգային պարկի և ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կողմից ձեռնարկվում են միջոցառումներ, մասնավորապես՝ ամենօրյա ստուգայցեր և շրջայցեր որսագողության կանխման, ինչպես նաև՝ թռչունների վիճակի գնահատման համար: «Չանգեզուր» կենսոլորտային ՊՈԱԿ-ի կողմից հատուկ պահպանվող տարածքներում իրականացվում են շուրջօրյա հերթապահությունները և պարբերական շրջայցերը: Վերջին շաբաթվա ընթացքում կատարվել են վայրի չվող և նստակյաց թռչնատեսակների ուսումնասիրություններ, որոնց ընթացքում հանդիպել են ամուրիկ, սպիտակախածո կեռնեխ, սև կեռնեխ, անտառային կաչաղակ, մեծ երաշտահավ, խայտաբղետ և սովորական փայտփորիկներ, սովորական խածկտիկ, հատբեկիչ, սոսնձակեռնեխ, սովորական սիտեղ, սովորական սարյակ, լեռնային դրախտապան և կարմրակատար: Դիտարկումների ընթացքում հանդիպել են նաև 4 եվրոպական այծյամ, 9 շնագայլ, 4 աղվես, 2 փորսող և 3 աքիս: Կատարվել է «Չանգեզուր» կենսոլորտային ՊՈԱԿ-ի «Խուստուփ» պետական արգելավայր մասաճյուղի փաթաթվող թփերի տեսակային հաշվառում: «Դիլիջան» ազգային պարկ»-ի պահպանության բաժնի աշխատակիցների կողմից հայտնաբերվել է



անտառախախտման 1 դեպք, որի առթիվ կազմվել է արձանագրություն և ուղարկվել է ՀՀ բնապահպանության նախարարության պետական տեսչության Տավուշի տարածքային բաժին: Գարնանամուտի հետ կապված նվազել է վառելիափայտի պահանջարկը, ինչի արդյունքում՝ աշխատանքային 4 օրվա ընթացքում բնակչությանը բաց է թողնվել 2 Խ.մ. վառելիափայտ: Նույն ժամանակահատվածում «Խոսրովի անտառ» պետական արգելոցը համագործակցելով Բնության համաշխարհային հիմնադրամի հետ, տեսա և ֆոտոբռնիչների օգնությամբ կատարում է կենդանական աշխարհի սեզոնային միգրացիայի և հաշվառման աշխատանքներ, որոնք հիմնականում տեղի են ունենում «Խոսրով» և «Խաչաձոր» տեղամասերում: «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրում ուսումնասիրությունների համար կատարվում են փորձահրապարակների նախապատրաստման և աշխատանքներ: Իրականացվում են շուրջօրյա հերթապահություններ և շրջապայություններ, որի ընթացքում մեկ շաբաթում չի հայտնաբերվել արգելոցային ռեժիմի որևէ խախտում: Արգելոցի բուսաբանական բաժնում կատարվում են հերբարիումների թվայնացման աշխատանքներ:

Նոր խթան երկրի գործարար միջավայրի բարելավման համար

Հայաստանի Հանրապետությունը դարձավ արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) թեկնածու երկիր

2017 թվականի մարտի 9-ին Կոլումբիայի մայրաքաղաք Բոգոտայում կայացած Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության խորհուրդը հաստատեց Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի թեկնածության հայտը և Հայաստանի Հանրապետությանը շնորհվեց ԱՃԹՆ-ի թեկնածու երկրի կարգավիճակ: Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունը դարձավ 52-րդ երկիրը, որը ներդրում է ԱՃԹՆ-ի ստանդարտը: Այս կապակցությամբ ՀՀ կառավարության

աշխատակազմի ղեկավար-նախարար, Հայաստանի ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի նախագահ Դավիթ Հարությունյանը նշել է. «ԱՃԹՆ-ի ներդրումը կիանգոցեցի հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկության ապահովմանը և հանրության առջև հաշվետվողականության բարձրացմանը: Այս գործոններն էական նշանակություն ունեն երկրի գործարար միջավայրի բարելավման համար: Բնական պաշարների արդյունահանման լավ կառավարումը կարող է նպաստավոր լինել երկրի քաղաքացիների համար, և ԱՃԹՆ-ն համապատասխան գործիք է այս նպատակին հասնելու ճանապարհին: ԱՃԹՆ-ի շնորհիվ հսկայական ծավալի տեղեկատվությունը հասանելի կդառնա բոլոր շահառուների համար: Իսկ գործընթացի ամենաարժեքավոր տեսանկյունն այն է, որ բազմաշահագրգիռ կողմերի կայուն ներգրավումը կամրապնդի փոխվստահությունը և համագործակցությունը բոլոր ներգրավված կողմերի միջև»: ԱՃԹՆ-ն Հայաստանում ստեղծում է հարթակ կառավարության, արդյունահանող ընկերությունների և քաղաքացիական հասարակության փոխհամագործակցության համար, որն ուղղված է արդյունահանող ոլորտի ֆինանսական հաշվետվողականության բարձրացմանը: Կոլումբիայում կայացած ԱՃԹՆ-ի միջազգային խորհրդի նիստին մասնակցել է Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը:

950,0 հազ. դրամ ընդհանուր գումարի վարչական տուգանքի 13 որոշում



ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչության կողմից 06.03-10.03.2017 թթ. ժամանակահատվածում իրականացված շրջայցերի, ԲՊՏ վարույթին հանձնված գործերի քննության և հաշվետվությունների ընդունման գործընթացում հայտնաբերված խախտումների արդյունքում կայացվել է 950,0 հազ. դրամ ընդհանուր գումարի վարչական տուգանքի 13 որոշում և հաշվարկվել 457,48 հազ. դրամ ընդհանուր գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս: Մասնավորապես՝

Բուսական աշխարհի պահպանության ոլորտ

Կազմվել է վարչական տուգանքի 6 որոշում՝ 450,0 հազ. դրամ ընդհանուր գումարի և հաշվարկվել է 407,48 հազ. դրամ ընդհանուր գումարի շրջակա միջավայրին պատճառած վնաս, որից՝ Տավուշի տարածքային բաժնի վարույթին հանձնված գործերի քննության արդյունքում 4 ֆիզիկական անձանց նկատմամբ ապօրինի հատված 4 ծառերի համար կայացվել է 350,0 հազ. դրամ ընդհանուր գումարի վարչական տուգանքի 4 որոշում և հաշվարկվել է 258,98 հազ. դրամ ընդհանուր գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս: Լոռիի տարածքային բաժնի վարույթին հանձնված գործի քննության արդյունքում 1 ֆիզիկական անձի նկատմամբ ապօրինի հատված 1 ծառի համար կայացվել է 50,0 հազ. դրամ գումարի վարչական տուգանքի որոշում և հաշվարկվել է 148,5 հազ. դրամ գու-

մարի շրջակա միջավայրին հասցված վնաս: Սյունիքի տարածքային բաժնի վարույթին հանձնված գործի քննության արդյունքում ծառահատման 1 դեպքի համար կայացվել է 50,0 հազ. դրամ գումարի վարչական տուգանքի որոշում:

Թափոնների տեղադրման ոլորտ

Վտանգավոր թափոնների անձնագրերը լիազոր մարմնի հետ չհամաձայնեցնելու համար Շիրակի տարածքային բաժնից մեկ տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ կիրառել է 50,0 հազ. դրամ գումարի վարչական տուգանք:

Փայտանյութի ապօրինի տեղափոխում

Կազմվել է վարչական տուգանքի 1 որոշում՝ 100,0 հազ. դրամ գումարով և հաշվարկվել է 36,0 հազ. դրամ գումարի շրջակա միջավայրին պատճառված վնաս, որից՝

Գեղարքունիքի տարածքային բաժնի կողմից հայտնաբերված խախտման համար 1 ֆիզիկական անձի նկատմամբ կայացվել է 100,0 հազ. դրամ գումարի վարչական տուգանքի որոշում և հաշվարկվել է 36,0 հազ. դրամ գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս: Ընդհանուր առմամբ ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչության կիրառած նախորդ պատժամիջոցներից հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 0,5 մլն. դրամ:

Գարնանամուտը բնության թանգարանում ավետվեց «Մայրություն» խորագրով ցուցահանդեսով



Նախարարության բնության պետական թանգարանում գարնանամուտն ազդարարվել է հերթական միջոցառմամբ: Տեղի է ունեցել Ֆլորա Հարությունյանի «Մայրություն» խորագրով նկարչական ցուցահանդեսը: Միջոցառմանը մասնակցել են նկարիչ Սամվել Սևադան, ասմունքող Աննա Կոստանյանը, աշակերտներ և հյուրեր: Աշակերտներն ու Ա. Կոստանյանի ասմունքի դպրոցի սաները հենդես են եկել մայրությանը նվիրված բանաստեղծություններով, երգ ու պարով:

Միջոցառման ընթացքում ելույթ է ունեցել ՀՀ արվեստի գործիչ Սամվել Սևադան, ասմունքել է Աննա Կոստանյանը: Միջոցառումն ամփոփել է թանգարանի տնօրեն Գայանե Ղազարյանը՝ Ֆլորա Հարությունյանին պարզևտրելով Հայաստանի բնության պետական թանգարանի պատվոգրով:

Արժեքավոր տեղեկություններ «Արարատյան որդան կարմիր» վերաբերյալ



Նկարները Ա. Խալաթյանի, 2016 թ.

Արարատյան որդան կարմիրը Հայաստանի ամենաճանաչված միջատներից է, որը որպես բանկարժեք ներկի աղբյուր հայտնի է եղել դարերի ընթացքում, ոչ միայն մեր երկրում, այլև նաև ողջ միջերկրածովային տարածաշրջանում: Տեսակը կապված է Արարատյան հարթավայրի էնդեմիկ է, էկոլոգիապես սերտորեն կապված հարթավայրի աղուտային տարածքների հետ: Որդանը սնվում է միայն երկու տեսակի բույսերով. որդանախոտով և եղեգով: Որդանի կենսաբանությունը համեմատաբար լավ է ուսումնասիրված՝ ՀՀ ԶԱԱ Կենդանաբանության ինստիտուտի, ինչպես նաև «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի բազմամյա հետազոտություններով: Այսպես, Ապրիլ-մայիս ամիսներին դուրս են գալիս նրանց թրթուրներ- թափառողները, որոնք բարձրանալով հողի մակերես, գտնում կերաբույսը և սնվում մինչև օգոստոս-սեպտեմբեր: Սնման ամբողջ ընթացքում թրթուրը մնում է կպած բույսին: Մայիսի վերջին կատարվում է մաշկափոխություն և առաջանում են ցիստեր: Օգոստոսի երկրորդ կեսից ցիստերի մի մասից սկսում են դուրս գալ արու թրթուրները, որոնք արտաքինից նման են հասուն էգերին, բայց չափերով շատ ավելի փոքր են: Որոշ ժամանակ անց դրանք կրկին անցնում են հողի տակ, որտեղ ձևավորվում են հարսնյակ-նիմֆերը: Այդ ամբողջ ժամանակահատվածում էգերի թրթուրները շարունակում են սնվել և աճել կերաբույսերին կպած ցիստերում: Ցիստերից դուրս գալուց հետո էգերը անմիջապես բարձրանում են հողի մակերևույթ և սպասում արուներին: Հասուն արուները ձևափոխությունից հետո մի քանի օր մնում են հողում, որի ընթացքում աստիճանաբար ձևավորվում են նրանց թևերը: Շարժուն դառնալուց հետո արուները կրկին դուրս են գալիս հողի մակերևույթ: Հասուն էգերը և արուները մասսայաբար դուրս են գալիս հողի երես սեպտեմբերից մինչև հոկտեմբերի կեսերը, վաղ առավոտյան՝

ժամը 6-ից մինչև 11-ը: Այդ ընթացքում կատարվում է նրանց զուգավորումը, որից հետո արուները սատկում են, իսկ բեղմնավորված էգերը անցնում են հողի մեջ և 1-5 սմ խորության վրա սկսում արտադրել նուրբ մոմային թելեր ու պատրաստել յուրօրինակ թավշոտ բոժոժ՝ ձվապարկ, որտեղ էլ ձվադրում են, որից հետո նրանք ևս սատկում են և ծնեռում են միայն ձվերը: Ասենք նաև, որ տեսակը խիստ վտանգվել է՝ աղուտների ինտենսիվ յուրացման տեսանկյունից: Անցյալ դարում կատարված լայնածավալ մեկտրատիվ աշխատանքները բերեցին տեսակի արեալի խիստ կրճատմանն ու մասնատմանը:

Այսպես, 1930 թ. 10000 հա տարածքից 1990-կաններին մնացել էր մոտ 2000 հա, և արելաք, ավա՞ղ, այս կերպ շարունակում է կրճատվել: Այժմ հիմնականում այն բաղկացած էր իրարից տարանջատված փոքր (հիմնականում մինչև մի քանի հեկտար) հատվածներից, որոնք շրջապատված են գյուղատնտեսական հողերով և խիստ խոցելի են թե շարունակվող գյուղատնտեսական գործունեության և հողերի յուրացման, և թե՛ կանխատեսվող կլիմայի փոփոխությունների տեսանկյունից:

Հաշվի առնելով որդանի վտանգված վիճակը, նա ընդգրկվել է ՀՀ Կարմիր գրքի մեջ և գնահատվել համաձայն միջազգայնորեն ընդունված Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի (IUCN Red List) չափորոշիչների, որպես «Կրիտիկական վիճակում գտնվող» տեսակ: 1986 թ. հատուկ այս տեսակի պահպանության նպատակով ստեղծվել է «Որդան կարմիր» արգելավայրը, որն այսօր գտնվում է «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի կազմում: Համաձայն մեր աշխատակիցների դիտարկումների՝ տեսակի քանակը այստեղ տատանվում է բազմամյա քանակության կանոնավոր փոփոխությունների սահմաններում և տարածքն այսօր տեսակի հետագա գոյատևման հիմնական միջավայրն է:

Սևանա լճի սառցակալման հետևանքները պետք է հաղթահարվեն համտեղ ջանքերով

Նախարարության «Սևան» ազգային պարկը լճի մակերևույթի սառցակալման առաջին իսկ օրերից սահմանել է խիստ հսկողություն թռչունների պահպանության համար: Պարկի և ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կողմից ձեռնարկվել են միջոցառումներ, մասնավորապես՝ Սևանի տարածքային բաժնի աշխատակիցների հետ համատեղ իրականացվում են ամենօրյա ստուգայցեր և շրջայցեր որսագողության կանխման, ինչպես նաև թռչունների վիճակի գնահատման համար, իսկ ՀՀ ոստիկանության Մարտունու տարածքային բաժնի աշխատակիցների հետ համատեղ հերթապահություն է իրականացվում Արփա գետի գետաբերանում, որտեղ մի փոքր հատված ազատ է սառույցից և տեղի են ունենում թռչունների կուտակումներ: Հսկողություն է սահմանված նաև «Նորաշենի» արգելոցում արծաթափայլ որդրի պահպանման համար, քանի որ լճի սառցակալման հետևանքով չի բացառվում, որ մարդիկ մոտենան ճայերի կղզյակներին: «Սևան» ազգային պարկի գիտության բաժնի կողմից նաև ինտենսիվ դիտարկումներ են իրականացվում սև փարփարի, կոնչան բադի, կարմրագլուխ սուզաբադի և մեծ սուզաբադի պոպուլյացիների նկատմամբ: Կապված եղանակային պայմանների հետ, Սևանա լճի հարակից շատ դաշտեր զուրկ են ձնածած-

կույթից և սև փարփարի պոպուլյացիան ինտենսիվ սննդառվում է հենց այդ տարածքներում: Իսկ այն թռչունները, որոնք սնվում են ջրային կենդանիներով և այլ անողնաշարավորներով, հիմնականում տեղափոխվել են Սևանա լճին հարակից ձկնաբուծարանների և գյուղացիների մասնավոր տարածքները, որտեղ կան լճակներ: «Սևան» ազգային պարկի ամբողջ անձնակազմը հրահանգավորված է, իսկ ազգաբնակչությունը և մասնավոր կազմակերպությունները իրազեկված են թռչուններին չվնասելու և թռչուններ նկատելու դեպքում անմիջապես պարկի անձնակազմին տեղեկացնելու մասին: Իրազեկման աշխատանքները շարունակվում են և այդ աշխատանքներին մասնակցում են նաև ՀՀ ոստիկանության մարզային աշխատակիցները: Մամուլի հրապարակումներում հայտնված սառույցը կոտրելու առաջարկի վերաբերյալ հարկ է նշել, որ Սևանա լճի սառույցը կոտրելու աշխատանքներ հնարավոր չէ իրականացնել, քանի որ համապատասխան տեխնիկական միջոցներ չկան, իսկ մարդկային ռեսուրսների միջոցով դրա իրականացումն իր մեջ կրում է բազմաթիվ լուրջ վտանգներ: Թռչունների արհեստական կերակրման առաջարկի հետ կապված հարկ է նշել, որ մշտական դիտարկումները շարունակվում են և որևէ խնդիր ծագելու դեպքում «Սևան» ազգային պարկը կփորձի իրականացնել արհեստական կերակրում, որը, սակայն, նախընտրելի չէ, և պետք է իրականացնել միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում, քանի որ մադկանց կողմից թռչունների արհեստական կերակրումը կարող է նրանց մոտ առաջացնել պայմանական ռեֆլեքս՝ մարդկանցից չվախենալու և մարդկանց վստահելու հետ կապված, որն էլ կարող է թռչուններին դարձնել որսագողության և այլ վտանգների թիրախ: Ըստ կանխատեսումների՝ սառցակալումը կշարունակվի մինչև մարտի վերջը:



Հայտարարություն

ԿԱՆԱԶ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՐԹԱԹՈՇՆԱԿԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ



Սատարում ենք ձեր կանաչ գաղափարներին և ծրագրերին

“Կանաչ Հայաստան” (Green Armenia) կրթաթոշակային ծրագիրը հովանավորում է այն գաղափարներն, ապրանքատեսակները, կինոնկարներն ու վավերագրական տեսաֆիլմերը, շնորհանդեսներն ու ձեռնարկատիրական նախաձեռնությունները, որոնք նպատակաուղղված են Հայաստանի բնակչության շրջանում բնապահպանական գաղափարների լայն տարածմանը:

Ծրագրին դիմելու համար այցելեք.
<http://yerevan.impacthub.net/programs-and-events/green-armenia-fellowship/>



Green Armenia-ն կհամագործակցի “Impact Hub Երևան”-ի հետ՝ օգտվելով վերջինիս ստեղծած բացառիկ Էկոհամակարգի բոլոր առավելություններից. աշխատանքային տարածքների հարմար ենթակառուցվածք, ձեռնարկատիրական բնույթի օժանդակություն, համագործակիցների հանրության աջակցություն, կրթական ծրագրեր ու միջոցառումներ:

Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի բոլոր բնակիչներն՝ անկախ տարիքից և կրթությունից:

Դիմումների ներկայացման վերջնաժամկետը.
2017 թ. ապրիլի 30-ին

Մրցույթի հաղթողի անունը կհայտարարվի
2017թ. մայիսի 15-ին

Ծրագրի իրականացման վերջնաժամկետը.
2018թ. հունվարի 31-ին

Հաղթողը կստանա դրամաշնորհ, ինչպես նաև մինչև ութ ամիս ժամկետով “Impact Hub Երևան”-ի աշխատանքային տարածքից օգտվելու հնարավորություն:

GREEN ARMENIA • ԿԱՆԱԶ ՀԱՅԱՍՏԱՆ
Ամերիկահայ Ճարտարագետների և Գիտնականների Ընկերակցություն • AESA
Հասցե՝ 117 S. Louise St. Suite 306, Glendale, CA, 91205 Էլ.փոստ՝ info@greenarmenia.net

Նախագիծը՝ Արծրուն Պեղանյանի
Խմբագիր՝ Սանվել Սկրչյան
Ձևավորումը՝ Նարինե Բաղդասարյանի
Նյութերը՝ ՀՀ ԲՆ Տեղեկատվության և հասարակության հետ կապերի վարչության

Հեռախոս՝
011 818 517